ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՄԱՄՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2015Թ. ՀՈՒՆՎԱՐ-ՀՈՒԼԻՍԻՆ

ԹԻՎ 7

ԵՐԵՎԱՆ – 2015

*Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2015թ. հունվար-հուլիսին*

*%*

| | *2015թ.* | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | հուն-վարը | փետր-վարը | մարտը | ապրիլը | մայիսը | հունիսը | հուլիսը | *հուլիսը* | | հունվար-հուլիսը 2014թ. հունվար-հուլիսի նկատմամբ |
| | *նախորդ ամսվա նկատմամբ* | | | | | | | 2014թ. հուլիսի նկատ-մամբ | 2014թ. դեկտեմբե-րի նկատ-մամբ | |
| ***Սպառողական գների ինդեքս- ընդամենը*** | 102.5 | 99.9 | 99.9 | 99.6 | 99.5 | 98.6 | 97.8 | 104.2 | 97.8 | 105.0 |
| *այդ թվում՝* | | | | | | | | | | |
| Սպառման ապրանքներ | 103.4 | 99.8 | 99.8 | 99.4 | 99.3 | 97.9 | 96.9 | 104.5 | 96.5 | 105.6 |
| | | | | | | | | | | |
| Պարենային ապրանքներ | 104.8 | 99.1 | 99.1 | 98.5 | 98.8 | 97.0 | 95.4 | 102.8 | 92.8 | 105.5 |
| | | | | | | | | | | |
| Ոգելից խմիչք, ծխախոտ | 100.4 | 100.0 | 100.0 | 99.6 | 100.3 | 100.2 | 100.2 | 101.5 | 100.6 | 102.1 |
| | | | | | | | | | | |
| Ոչ պարենային ապրանքներ | 101.1 | 101.3 | 101.2 | 101.0 | 100.1 | 99.4 | 99.3 | 106.5 | 103.3 | 105.8 |
| | | | | | | | | | | |
| Ծառայություններ | 100.3 | 100.3 | 100.2 | 100.1 | 100.1 | 100.1 | 99.9 | 103.6 | 101.0 | 103.7 |

***Սպառողական գներ:*** 2015թ. հուլիսին հունիսի համեմատ ՀՀ սպառողական շուկայում արձանագրվել է 2.2% գնանկում, ինչը հիմնականում պայմանավորվել է պարենային ապրանքների 4.6% գնանկումով: Պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գները նշված ժամանակահատվածում նվազել են 4.1%-ով, ոչ պարենային ապրանքներինը՝ 0.7%-ով: Ծառայությունների ոլորտում սակագները նվազել են 0.1%-ով:

2015թ. հուլիսին 2014թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 97.8%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 93.6%, ոչ պարենային ապրանքներինը՝ 103.3%, ծառայությունների սակագներինը՝ 101.0%:

2015թ. հունվար-հուլիսին սպառողական գների միջին ամսական նվազումը կազմել է 0.32%, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը (0.27% նվազում) 0.05 տոկոսային կետով:

**Սպառողական գների հավելաճը 2006-2015թթ. հուլիսին**

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%




2015թ. հուլիսին 2014թ. հուլիսի համեմատ սպառողական գների ինդեքսը կազմել է 104.2%, այդ թվում, պարենային ապրանքներինը (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)՝ 102.8%, ոչ պարենային ապրանքներինը՝ 106.5%, ծառայությունների սակագներինը՝ 103.6%, իսկ հունվար-հուլիսին 2014թ. հունվար-հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 105.0%, 105.2%, 105.8% և 103.7%:

Հանրապետության դիտարկվող բոլոր քաղաքներում 2015թ. հուլիսին հունիսի համեմատ սպառողական գները նվազել են 3.3-1.5%-ով, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում սպառողական գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ նվազել է 2.1%-ով:

***Պարենային ապրանքների գներ:*** 2015թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է պարենային ապրանքների 4.6% գնանկում, ինչը հիմնականում պայմանավորվել է մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի, ձվի՝ 29.1-5.3% գնանկումով: Դիտարկվող պարենային 13 ապրանքախմբերից 11-ում նշված ժամանակահատվածում գրանցվել է 29.1-0.2% գնանկում, մեկում՝ 0.3% գնաճ, իսկ մեկում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

Մրգի ապրանքախմբում[1] 2015թ. հուլիսին 2014թ. հուլիսի համեմատ գրանցվել է 11.1%, իսկ 2015թ. հունիսի համեմատ՝ 29.1% գնանկում: 2015թ. հուլիսին հունիսի համեմատ ձմերուկի գինը նվազել է 66.9%-ով, ծիրանինը՝ 63.5%-ով, խնձորինը՝ 43.8%-ով, կեռասինը՝ 26.2%-ով, նարնջինը՝ 4.9%-ով, աղամաթզինը՝ 0.3%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է չորացրած մրգերի՝ 3.7%, ելակի՝ 7.4%, կիտրոնի 9.3% գնաճ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2015թ. հուլիսին հունիսի համեմատ արձանագրվել է մրգի 37.4-22.3% գնանկում, այդ թվում, գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Եղեգնաձորում: Մայրաքաղաքում մրգի գները նվազել են 29.7%-ով:

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում[1] 2015թ. հուլիսին 2014թ. հուլիսի համեմատ արձանագրվել է 9.0% գնաճ, իսկ 2015թ. հունիսի համեմատ՝ 10.7% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է սմբուկի՝ 69.7%, ճակնդեղի՝ 35.5%, կանաչ լոբու՝ 29.3%, ծաղկակաղամբի՝ 26.7%, կանաչ պղպեղի՝ 26.0%, գազարի՝ 25.9%, լոլիկի՝ 22.7%, կաղամբի՝ 19.2%, խառը կանաչեղենի 12.6% գնանկումով: 2015թ. հուլիսին հունիսի համեմատ սնկի գինը նվազել է 1.8%-ով, կանաչ սոխինը՝ 1.4%-ով: Միաժամանակ, հանրապետությունում արձանագրվել է գլուխ սոխի՝ 1.0%, կարտոֆիլի՝ 3.0%, սխտորի՝ 8.8%, վարունգի 49.0% գնաճ:

Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում 2015թ. հուլիսին հունիսի համեմատ բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գները նվազել են 23.8-6.8%-ով: Մայրաքաղաքում բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբի գները նախորդ ամսվա համեմատ նվազել են 7.7%-ով:

***2015թ. հուլիսին հունիսի համեմատ մրգի, բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբերի ընդհանուր գնանկումը կազմել է 17.7%: Վերոհիշյալ ապրանքախմբերը սպառողական զամբյուղում ունենալով 8.99% տեսակարար կշիռ, նշված ժամանակահատվածում նպաստել են սպառողական գների ընդհանուր մակարդակի նվազմանը 1.53 տոկոսային կետով:***

Ձվի հանրապետական միջին գինը 2015թ. հուլիսին 2014թ. հուլիսի համեմատ աճել է 2.5%-ով, իսկ 2015թ. հունիսի համեմատ գրանցվել է 5.3% գնանկում: Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2015թ. հուլիսին հունիսի համեմատ ձվի գինը նվազել է 9.0-2.5%-ով, իսկ երկուսում գրանցվել է 0.8-1.7% գնաճ: Մայրաքաղաքում ձվի գինը նվազել է 6.0%-ով:

Շաքարավազի հանրապետական միջին գինը 2015թ. հուլիսին 2014թ. հուլիսի համեմատ աճել է 1.1%-ով, իսկ 2015թ. հունիսի համեմատ գրանցվել է 2.5% գնանկում: Հանրապետության դիտարկված 10 քաղաքներում 2015թ. հուլիսին հունիսի համեմատ արձանագրվել է շաքարավազի 3.7-0.1% գնանկում, իսկ մեկում՝ 0.6% գնաճ: Մայրաքաղաքում շաքարավազի գինը նվազել է 2.8%-ով:

Կաթնամթերքի ապրանքախմբում 2015թ. հուլիսին 2014թ. հուլիսի համեմատ գրանցվել է 3.0% գնաճ, իսկ 2015թ. հունիսի համեմատ՝ 1.8% գնանկում: Վերջինս հիմնականում պայմանավորվել է «Չանախ» և «Լոռի» պանրատեսակների՝ համապատասխանաբար 6.3% և 4.6%, խտացրած կաթի 4.1% գնանկումով:

Մսամթերքի ապրանքախմբում 2015թ. հուլիսին 2014թ. հուլիսի համեմատ գրանցվել է 2.4% գնաճ, իսկ 2015թ. հունիսի համեմատ՝ 0.7% գնանկում: 2015թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում արձանագրվել է ոչխարի մսի՝ 2.7%, թռչնամսի՝ 2.3%, այլ մսեղենի (խաշի պարագաներ)՝ 2.2%, հավի բդի՝ 1.3%, տավարի մսի՝ 0.7%, տավարի փափկամսի 0.6% գնանկում: Խոզի մսի գինը նշված ժամանակահատվածում աճել է 1.5%-ով:

Հանրապետության դիտարկված 9 քաղաքներում 2015թ. հուլիսին հունիսի համեմատ արձանագրվել է

[1] *2015թ. հունիս-հուլիսին 2014թ. հունիս և հուլիս ամիսների նկատմամբ բանջարեղենի և մրգի առանձին տեսակների գների և գների տոկոսային փոփոխությունների մասին տեղեկատվությունը բերված է հավելված 1-ում:*

մսամթերքի 2.9-0.3% զնանկում, 2-ում՝ 0.1-0.3% զնաճ: Մայրաքաղաքում մսամթերքի գները նվազել են 0.7%-ով:

2015թ. հուլիսին հունիսի համեմատ ձկնամթերքի գինը նվազել է 0.4%-ով, այլ մթերքինը՝ 0.4%-ով, հացամթերքինը՝ 0.3%-ով, կենդանական և բուսական յուղերինը՝ 0.2%-ով, սուրճինը, թեյինը, կակաոյինը՝ 0.2%-ով: Միաժամանակ, հանրապետությունում գրանցվել է ոգելից խմիչքի և ծխախոտի, հրուշակեղենի՝ համապատասխանաբար 0.2% և 0.3% գնաճ, իսկ ոչ ոգելից խմիչքի ապրանքախմբում գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

***Ոչ պարենային ապրանքների գներ:*** 2015թ. հուլիսին հունիսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցվել է 0.7% գնանկում, ինչը հիմնականում կոշկեղենի՝ 4.3%, հագուստի և գործվածքի՝ 3.1%, վառելիքի՝ 1.2%, կենցաղային էլեկտրաապրանքների՝ 0.7%, ոսկերչական ապրանքների 0.7% գնանկման արդյունք է: Դեղամիջոցների գները նշված ժամանակահատվածում նվազել են 0.6%-ով, կահույքինը՝ 0.5%-ով, լվացող միջոցներինը՝ 0.5%-ով, տեքստիլեղենինը՝ 0.4%-ով, շինանյութերինը՝ 0.3%-ով, այգեգործական ապրանքներինը՝ 0.1%-ով: Միաժամանակ, հանրապետությունում արձանագրվել է գորգեղենի՝ 0.1%, խոհանոցային սպասքի՝ 0.4%, գրենական պիտույքների՝ 0.4%, մշակույթի ապրանքների՝ 0.7%, գեղահարդարման ապրանքների 1.5% գնաճ, իսկ անձնապիտո ապրանքների գների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

2015թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի՝ համապատասխանաբար 2.0% և 1.8% գնաճ: 2015թ. հուլիսին 2014թ. հուլիսի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնեըը նվազել են համապատասխանաբար 8.7% և 8.1%-ով, իսկ 2014թ. դեկտեմբերի համեմատ՝ համապատասխանաբար 7.6% և 9.4%-ով:

2015թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետության դիտարկված 3 քաղաքներում ոչ պարենային ապրանքների գները նվազել են 1.3-0.1%-ով (գնանկման ամենաբարձր ցուցանիշն արձանագրվել է մայրաքաղաքում), 4-ում գրանցվել է 0.1-0.8% գնաճ, իսկ մյուս 4-ում պահպանվել է գների նախորդ ամսվա մակարդակը:

***Ծառայությունների սակագներ:*** Բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում 2015թ. հուլիսին հունիսի համեմատ սակագները նվազել են 0.1%-ով, ինչը հիմնականում տրանսպորտի՝ 1.9%, մշակույթի ոլորտի՝ 0.4%, կրթության համակարգի 0.1% ծառայությունների սակագների նվազման արդյունք է: Դրան զուգընթաց, հանրապետությունում գրանցվել է կենցաղային բնույթի՝ 0.2%, հանգստի կազմակերպման՝ 0.2%, բուժսպասարկման՝ 0.3%, իրավական ու բանկային 1.3% ծառայությունների սակագների հավելաճ, իսկ բնակարանային-կոմունալ, կապի, հանրային սննդի ծառայությունների սակագների մակարդակը նախորդ ամսվա համեմատ մնացել է անփոփոխ:

Հանրապետության դիտարկված 8 քաղաքներում 2015թ. հուլիսին հունիսի համեմատ արձանագրվել է ծառայությունների սակագների 0.2-0.1% նվազում, երկուսում՝ 0.2% հավելաճ, իսկ մեկում պահպանվել է սակագների նախորդ ամսվա մակարդակը: Մայրաքաղաքում ծառայությունների սակագների մակարդակը նվազել է 0.1%-ով:

---

*Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվել է 2015թ. հուլիսի 1-ին, 10-ին, 20-ին և դրանց մոտակա օրերին Երևան քաղաքում և հանրապետության մարզերի 10 բնակավայրերում 470 անվանում ապրանք-ծառայությունների գծով:*

**ՀՀ սպառողական շուկայում պարենային (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ), ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2015թ. հունվար-հուլիսին**

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%



| | Հունվար | Փետրվար | Մարտ | Ապրիլ | Մայիս | Հունիս | Հուլիս |
|---|---|---|---|---|---|---|---|
| Պարենային ապրանքների | 4.4 | 3.6 | 2.8 | 14 | 0.3 | -2.4 | -6.4 |
| Ոչ պարենային ապրանքների | 11 | 2.4 | 3.6 | 4.6 | 4.7 | 4.1 | 3.3 |
| Ծառայությունների | 0.3 | 0.6 | 0.8 | 0.9 | 0.9 | 11 | 10 |
| Սպառողական գների ինդեքս | 2.5 | 2.4 | 2.3 | 19 | 14 | 0.0 | -2.2 |

***Արտարժույթի շուկա:*** 2015թ. հուլիսին հունիսի համեմատ սպառողական շուկայում արձանագրված 2.2% գնանկումն ուղեկցվել է ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի 0.5% հավելաճով (ԱՄՆ դոլարն արժևորվել է): 2015թ. հուլիսին 2014թ. դեկտեմբերի համեմատ սպառողական գների ընդհանուր մակարդակը նվազել է 2.2%-ով, իսկ հաշվարկային փոխարժեքն աճել է 3.0%-ով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում սպառողական գների 1.9% նվազումն ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 0.4% հավելաճով: 2015թ. հուլիսին ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի միջին հաշվարկային փոխարժեքը կազմել է 477.3 դրամ, ինչը գերազանցել է 2014թ. հուլիսի համապատասխան ցուցանիշը 17.2%-ով (407.1 դրամ):

**ՀՀ սպառողական գների ինդեքսի, ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքների փոփոխությունները 2014-2015թթ. հունվար-հուլիսին**

նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ,%




ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ Ս. Մնացականյան

Գ. Մարտիրոսյան
011-564-566

*Հավելված 1*

*Մրգի և բանջարեղենի առանձին տեսակների սպառողական միջին գները և գների ինդեքսները ՀՀ-ում և Երևան քաղաքում*

| | Չափի միավորը | *Գների ինդեքսը ՀՀ-ում, %* | | | | *այդ թվում՝* | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | ***2015թ.*** | | | | ***Քաղաք Երևան*** | | | | | |
| | | *հունիսը* | | *հուլիսը* | | *Միջին գին (դրամ)* | | | | *գների ինդեքս, %* | |
| | | 2015թ. մայիսի նկատմամբ | 2014թ. հունիսի նկատմամբ | 2015թ. հունիսի նկատմամբ | 2014թ. հուլիսի նկատմամբ | ***2014*** | | ***2015*** | | 2015թ. հունիսը 2014թ. հունիսի նկատմամբ | 2015թ. հուլիսը 2014թ. հուլիսի նկատմամբ |
| | | | | | | *Հունիս* | *Հուլիս* | *Հունիս* | *Հուլիս* | | |
| ***Միրգ, ընդամենը*** | | ***113.3*** | ***121.1*** | ***70.9*** | ***88.9*** | ***x*** | ***x*** | ***x*** | ***x*** | ***119.8*** | ***87.0*** |
| *այդ թվում՝* | | | | | | | | | | | |
| Խնձոր | կգ | 98.0 | 113.8 | 56.2 | 58.1 | 782.8 | 832.7 | 802.5 | 486.4 | 102.5 | 58.4 |
| Ծիրան | “-“ | | 50.3 | 36.5 | 25.1 | 2496.3 | 1812.9 | 1459.3 | 465.6 | 58.5 | 25.7 |
| Ելակ | “-“ | 58.1 | 84.1 | 107.4 | 45.9 | 1238.1 | 2993.6 | 972.1 | 1249.1 | 78.5 | 41.7 |
| Ձմերուկ | “-“ | | 104.3 | 33.1 | 87.7 | 470.7 | 184.0 | 508.1 | 150.7 | 107.9 | 81.9 |
| Արևադարձային պտուղ (նարինջ) | “-“ | 116.5 | 136.4 | 95.1 | 128.5 | 682.2 | 679.3 | 986.8 | 905.0 | 144.6 | 133.2 |
| Կիտրոն | “-“ | 115.2 | 102.8 | 109.3 | 106.3 | 232.0 | 244.6 | 236.9 | 261.3 | 102.1 | 106.8 |
| Աղամաթուզ (բանան) | “-“ | 91.4 | 97.6 | 99.7 | 101.0 | 927.1 | 889.7 | 893.5 | 898.7 | 96.4 | 101.0 |
| Ընկույզի միջուկ | “-“ | 102.5 | 133.6 | 100.6 | 129.9 | 6709.3 | 7038.9 | 8654.8 | 8769.6 | 129.0 | 124.6 |
| ***Բանջարեղեն և կարտոֆիլ, ընդամենը*** | | ***69.1*** | ***93.1*** | ***89.3*** | ***109.0*** | ***x*** | ***x*** | ***x*** | ***x*** | ***91.7*** | ***108.6*** |
| *այդ թվում՝* | | | | | | | | | | | |
| Կաղամբ | կգ | 44.5 | 77.4 | 80.8 | 80.7 | 112.8 | 87.1 | 87.7 | 72.2 | 77.7 | 82.9 |
| Լոլիկ | “-“ | 36.3 | 78.1 | 77.3 | 100.3 | 489.8 | 310.2 | 387.7 | 309.2 | 79.2 | 99.7 |
| Վարունգ | “-“ | 75.4 | 117.8 | 149.0 | 178.9 | 249.3 | 273.8 | 332.2 | 547.0 | 133.3 | 199.8 |
| Գլուխ սոխ | “-“ | 81.6 | 89.1 | 101.0 | 93.8 | 329.6 | 318.4 | 278.8 | 302.1 | 84.6 | 94.9 |
| Գազար | “-“ | 99.6 | 105.9 | 74.1 | 98.6 | 543.9 | 420.3 | 570.8 | 423.6 | 104.9 | 100.8 |
| Սեղանի ճակնդեղ | “-“ | 116.6 | 90.8 | 64.5 | 59.7 | 292.4 | 300.1 | 272.5 | 157.7 | 93.2 | 52.6 |
| Սխտոր | “-“ | 80.3 | 102.0 | 108.8 | 116.6 | 1367.1 | 1353.7 | 1443.6 | 1692.8 | 105.6 | 125.0 |
| Կանաչ սոխ | “-“ | 69.8 | 92.7 | 98.6 | 84.7 | 767.9 | 871.7 | 635.1 | 660.9 | 82.7 | 75.8 |
| Սմբուկ | “-“ | 89.3 | 94.6 | 30.3 | 76.5 | 1067.9 | 393.3 | 887.5 | 262.9 | 83.1 | 66.8 |
| Կանաչ պղպեղ | “-“ | 39.8 | 81.6 | 74.0 | 124.8 | 800.8 | 420.3 | 637.2 | 488.4 | 79.6 | 116.2 |
| Խառը կանաչի | “-“ | 85.4 | 132.9 | 87.4 | 119.2 | 664.5 | 680.4 | 930.6 | 809.1 | 140.0 | 118.9 |
| Կարտոֆիլ | “-“ | 106.5 | 82.9 | 103.0 | 121.2 | 198.6 | 145.8 | 163.3 | 172.5 | 82.2 | 118.3 |

*Հավելված 2*

## *Սպառողական գների ինդեքսը Եվրամիության, ԱՊՀ և աշխարհի մի շարք այլ երկրներում* [1]

%

| | 2014թ. դեկտեմբերը 2013թ. դեկտեմբերի նկատմամբ | *2015թ.* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | հունվարը | փետրվարը | մարտը | ապրիլը | մայիսը | հունիսը | հունիսը 2014թ. դեկտեմբերի նկատմամբ |
| | | նախորդ ամսվա նկատմամբ | | | | | | |
| Ավստրիա | 100.8 | 98.6 | 100.3 | 101.4 | 100.1 | 100.2 | 100.0 | 100.5 |
| Բելգիա | 99.6 | 97.9 | 102.4 | 100.3 | 100.3 | 100.3 | 100.2 | 101.3 |
| Բուլղարիա | 98.0 | 99.3 | 100.1 | 100.3 | 100.5 | 100.0 | 99.5 | 99.7 |
| Հունգարիա | 99.2 | 99.8 | 100.5 | 100.6 | 100.4 | 100.7 | 100.2 | 102.3 |
| Գերմանիա | 100.1 | 98.7 | 101.0 | 100.5 | 99.9 | 100.1 | 99.8 | 100.1 |
| Հունաստան | 97.5 | 98.8 | 99.8 | 101.9 | 100.4 | 99.8 | 100.9 | 101.6 |
| Դանիա | 100.1 | 99.4 | 100.9 | 100.5 | 100.2 | 100.0 | 99.9 | 100.9 |
| Իռլանդիա | 99.7 | 99.3 | 100.6 | 100.6 | 99.9 | 100.5 | 100.4 | 101.4 |
| Իսպանիա | 98.9 | 97.8 | 100.1 | 102.0 | 100.7 | 100.4 | 100.2 | 101.2 |
| Իտալիա | 99.9 | 97.5 | 100.3 | 102.1 | 100.4 | 100.2 | 100.2 | 100.6 |
| Կիպրոս | 99.0 | 99.1 | 100.5 | 100.7 | 100.3 | 101.1 | 100.3 | 102.1 |
| Լատվիա | 100.3 | 100.1 | 100.4 | 100.8 | 100.6 | 100.8 | 99.9 | 102.5 |
| Լիտվա | 99.9 | 98.7 | 99.9 | 100.8 | 100.7 | 100.6 | 99.8 | 100.5 |
| Լյուքսեմբուրգ | 99.1 | 98.9 | 102.0 | 100.4 | 100.1 | 100.5 | 100.2 | 102.2 |
| Մալթա | 100.4 | 98.9 | 100.5 | 100.9 | 102.8 | 100.9 | 101.0 | 105.0 |
| Նիդերլանդներ | 99.9 | 98.8 | 100.8 | 101.3 | 100.8 | 100.2 | 99.4 | 101.4 |
| Լեհաստան | 99.4 | 99.7 | 99.9 | 100.2 | 100.4 | 100.1 | 100.1 | 100.4 |
| Պորտուգալիա | 99.7 | 98.5 | 100.0 | 101.9 | 100.4 | 100.5 | 99.9 | 101.2 |
| Ռումինիա | 101.0 | 100.3 | 100.4 | 100.5 | 100.2 | 100.6 | 97.5 | 99.4 |
| Սլովակիա | 99.9 | 99.9 | 99.8 | 100.2 | 100.3 | 100.3 | 100.1 | 100.6 |
| Սլովենիա | 99.9 | 98.8 | 100.2 | 100.9 | 100.1 | 100.7 | 99.9 | 100.5 |
| Միացյալ Թագավորություն | 100.5 | 99.1 | 100.3 | 100.2 | 100.2 | 100.2 | 100.0 | 100.0 |
| Ֆինլանդիա | 100.6 | 99.3 | 100.3 | 100.4 | 100.0 | 99.9 | 100.0 | 99.9 |
| Ֆրանսիա | 100.1 | 98.9 | 100.7 | 100.7 | 100.1 | 100.2 | 99.9 | 100.7 |
| Խորվաթիա | 99.9 | 99.5 | 100.1 | 100.8 | 100.4 | 100.6 | 100.3 | 101.7 |
| Չեխիայի Հանրապետություն | 100.1 | 99.9 | 100.1 | 100.2 | 100.4 | 100.3 | 100.2 | 101.1 |
| Շվեդիա | 100.3 | 98.9 | 100.8 | 100.1 | 100.2 | 100.4 | 99.7 | 100.2 |
| Էստոնիա | 100.1 | 99.6 | 100.5 | 100.7 | 100.6 | 100.4 | 100.1 | 101.8 |
| ***Ընդամենը Եվրամիության երկրներ (ԵՄ -28)*** [2] | ***99.9*** | ***98.7*** | ***100.5*** | ***100.9*** | ***100.3*** | ***100.2*** | ***100.0*** | ***100.6*** |
| ***Հայաստան*** | ***104.6*** | ***102.5*** | ***99.9*** | ***99.9*** | ***99.6*** | ***99.5*** | ***98.6*** | ***100.0*** |
| Ռուսաստան | 111.4 | 103.9 | 102.2 | 101.2 | 100.5 | 100.4 | 100.2 | 108.5 |
| Բելառուս | 116.2 | 102.4 | 101.7 | 100.8 | 100.9 | 100.7 | 100.7 | 107.3 |
| Ուկրաինա | 124.9 | 103.1 | 105.3 | 110.8 | 114.0 | 102.2 | 100.4 | 140.7 |
| Ղազախստան | 107.4 | 100.6 | 100.4 | 100.1 | 100.1 | 100.3 | 99.9 | 101.4 |
| Ղրղզստան | 110.5 | 101.5 | 100.3 | 99.8 | 100.4 | 99.2 | 99.1 | 100.2 |
| Մոլդովա | 104.7 | 100.8 | 102.2 | 100.9 | 101.0 | 100.5 | 100.1 | 105.7 |
| Տաջիկստան | 107.4 | 100.6 | 100.1 | 100.8 | 100.7 | 100.3 | 100.1 | . . . |
| Վրաստան | 102.0 | 100.2 | 100.1 | 101.2 | 100.3 | 100.6 | 100.02 | . . . |
| Կանադա | 99.3 | 99.8 | 100.9 | 100.7 | 99.9 | 100.6 | 100.2 | 102.2 |
| Նորվեգիա | 99.9 | 99.7 | 100.4 | 100.3 | 100.4 | 100.3 | 100.3 | 101.4 |
| Բրազիլիա | 100.8 | 101.2 | 101.2 | 101.3 | 100.7 | 100.7 | 100.8 | 106.2 |
| Կորեայի Հանրապետություն | 100.0 | 100.5 | 100.0 | 100.0 | 100.1 | 100.3 | 100.0 | 100.9 |
| ԱՄՆ | 99.4 | 99.5 | 100.4 | 100.6 | 100.2 | 100.5 | 100.4 | 101.6 |
| Թուրքիա | 99.6 | 101.2 | 100.9 | 101.2 | 101.3 | 100.5 | 99.8 | 105.0 |
| Շվեյցարիա | 100.0 | 99.4 | 99.6 | 100.5 | 99.8 | 100.0 | 100.2 | 99.5 |

. . . - Տվյալները բացակայում են:

1- Տեղեկատվությունը պատրաստվել է Եվրոստատի, ազգային վիճակագրական ծառայությունների կայք էջերում, ինչպես նաև ԱՄՀ-ի Տվյալների տարածման հատուկ ստանդարտների պահանջներին համապատասխան ԱՄՀ-ի կայք էջում զետեղված ցուցանիշների հիման վրա:

2- Եվրամիության երկրների համար ներկայացված է միասնական մեթոդաբանությամբ հաշվարկված և Եվրոպական վիճակագրական համակարգի ստանդարտներին համապատասխան հարմոնիզացված սպառողական գների ինդեքսներ:

«**Սպառողական գների ինդեքսը Հայաստանի Հանրապետությունում 2015թ. հունվար-օգոստոսին**» մամուլի հաղորդագրության հրապարակման ժամկետը, համաձայն «2015 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի», նախատեսված է 2015թ. սեպտեմբեր ամսվա 5-րդ աշխատանքային օրը (տես՝ծածկագիր 1300-301, Հավելված 3, էջ 67):